

Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ – 2022թ.

11-րդ դասարան

Պատասխաններ

2. քառասմբակ – քառատրոփ, արագասույր, սրարշավ, արագընթաց, ճեպընթաց և այլն
վիմակարկառ- ժայռակարկառ, քարակարկառ, քարքարոտ, ժայռոտ, ժայռեղեն
խանդակ – երկար խոր փոս, պարիսպների շուրջ փորված խրամ, խրամատ,
երկբայել- երկմտել, կասկածել, տարակուսել, տատանվել և այլն
առաթուր – ոտնակոխ, ոտնատակ, կոխկրտելով,
խոլական – կատաղի, ուժգին, մոլեգին, վայրագ,
նկրտում – ձգտում, ցանկություն, բաղձանք՝ առավելապես վատ իմաստով
տվնջան – ցերեկային
ոգորել – պայքարել՝ մաքառել՝ մարտնչել որևէ արգելքի դեմ
ցայգալույս- գիշեր, առավոտին նախորդող ժամանակը,
3. **ավոր, իվ, ող, ին ակ ուն, սպ, ան, ավ, բաց**
4. **-ներ** - տեսակետ, խմբագիր, բաղաձայն, սիրամարգ, կարմրախայտ, խաչբառ, սկյուռ,
մակաբույծ, պատճեն, շատակեր
5. Անկանոն բայերը՝ **զարկել, բանալ, բերել, տալ, տեսնել, անել, դառնալ, լինել, գալ, ասել:**
6. դեպի – տեղի կապ, շուրջբոլորը – տեղի մակբայ, համոզված – հարակատար դերբայ,
որ–ստորադասական շաղկապ, այնքան – ցուցական դերանուն, իսպառ – չափի մակբայ,
ամեն ինչ – որոշյալ դերանուն, երբ – հարաբերական դերանուն,
տվնջան – հարաբերական ածական, հետո – ժամանակի մակբայ
7. **ա.** Բայի ելակետային սկզբնաձևն է, ունի -ել, -ալ վերջավորություն, **բ.** արտահայտում է
գործողության ընդհանուր գաղափար, **գ.** գործածվում է գոյականաբար, **դ.** հոլովվում է *առ*
հոլովմամբ, **ե.** հոգնակի թիվ չունի, **զ.** ուղիղ կամ հոլովված ձևերով կարող է լինել
ենթակա, ստորոգելի, գոյականական և բայական անդամների լրացումներ:
8. Հետո մի խոկուն հայացք՝ գամված բերդին:- անվանական անդամ
Վերացնել՝ պաշարումը: - բայական անդամ
9. **երկրներ-** ուղիղ խնդիր, **համոզված** – ստորոգելի, **գորականի** – հատկացուցիչ,
զրավելու- որոշիչ, **չորրորդ օրը-** ժամանակի պարագա, **վաղորդային-** բացահայտիչ,
հայացք - ենթակա, **աշտարակին-** հանգման խնդիր

Գնահատման չափանիշներ

- Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,4 միավոր:
Հարց 8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Հարց 9. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:

Ուշադրություն: Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: